# ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ STARTUP ԾՐԱԳԻՐ

**Սիրելի հայրենակիցներ,**

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ «Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ» (FAST) - ի հետ համատեղ կազմակերպվում է «ՆերՈւժ» ծրագիրը: Ծրագրի իրականացմանն աջակցում են նաև «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամը, Դիլիջանի միջազգային դպրոցը (UWC), «Impact Hub Yerevan» ընկերությունը և Հայ-ռուսական համալսարանը:

## Ի՞նչ է «ՆերՈւժը»

«ՆերՈւժ» ծրագիրը նախատեսված է սփյուռքում բնակվող հայազգի այն երիտասարդ ձեռներեցների համար, որոնք ցանկություն ունեն իրենց սթարթափ գաղափարներն ու ծրագրերն իրականացնել Հայաստանում:

## Մասնակցելու համար կարող են դիմել այն անձինք, ովքեր՝

- 18-35 տարեկան են,
- ազգությամբ հայ են և մշտապես բնակվում են Հայաստանի սահմաններից դուրս, կամ Հայաստանի Հանրապետություն են տեղափոխվել վերջին 6 ամսում,
- սթարթափի հիմնադիրը կամ հիմնադիրներից առնվազն մեկը ազգությամբ հայ է, առկա է Հայաստանում կամ Արցախում սթարթափ հիմնելու և բնակություն հաստատելու պատրաստակամություն,
- սթարթափ ծրագրի ոլորտը համապատասխանում է հետևյալ թիրախային
- ոլորտներին և դրանցից բխող ենթաոլորտներին՝

  - գյուղատնտեսություն,
  - զբոսաշրջություն,
  - նորարարական տեխնոլոգիաներ:

## Որից հետո

- Ծրագրերի գնահատման հանձնաժողովի կողմից կընտրվեն մինչև հարյուր լավագույն աշխատանքներ, որոնք համապատասխանում են ծրագրի կայքէջում նշված չափանիշներին:
- Ծրագրի մասնակիցները կծանոթանան Հայաստանին և երկրում գործող բիզնես միջավայրին:
- Լավագույն թեկնածուների ընտրությունից հետո յուրաքանչյուր թիմից 2-ական մասնակից 2018 թ. դեկտեմբերի 16 - 21-ը կհրավիրվի Դիլիջանի միջազգային դպրոց (UWC)՝ սթարթափ ծրագրին մասնակցելու նպատակով:
- Սթարթափ ծրագիրը կեզրափակվի «պիթչինգի» փուլով, որի ընթացքում հաղթող ճանաչված մինչև 10 լավագույն թիմ կարժանանա Նորարարության դրամաշնորհների և էկոհամակարգի պարգևների, որոնք նրանց կտրվեն Հայաստան կամ Արցախ տեղափոխվելուց հետո:

**Նորարարության դրամաշնորհներն ու էկոհամակարգի պարգևները ներառում են հետևյալը՝**

- Յուրաքանչյուր հաղթող թիմ  Հայաստանի կամ Արցախի հանրապետություններում բնակություն հաստատելուց հետո կստանա դրամաշնորհ՝ մինչև 15 միլիոն դրամի չափով:
- Նորարարության դրամաշնորհների հաղթողներին կտրվեն նաև էկոհամակարգի պարգևներ, որոնք ներառում են հետևյալը՝
  - իրավական և հարկային անվճար խորհրդատվություն,
  - անդամակցություն «FAST» սթարթափ-ստուդիային՝ չորս ամիս շարունակ ամբողջական «քոուչինգի» ծրագրերից և աշխատանքային տարածքից օգտվելու հնարավորությամբ,
  - «Impat Hub Yerevan» ընկերությունում ութ ամսվա փորձառնության հնարավորություն, որտեղ հաղթող թիմերին կտրամադրվեն աշխատանքային մասնագիտացված տարածքներ և ռեսուրսներ, ինչպես նաև կանցկացվեն մենթորության դասընթացներ,
  - մենթորություն և «քոուչինգ»՝ ոլորտի փորձագետների միջոցով,
  - գործընկեր կազմակերպությունների կողմից մշտական աջակցության ցուցաբերում:

**Ինչո՞ւ Հայաստան**

- Հայրենիք վերադառնալու և ապրելու հնարավորություն
- Հայաստանում սփյուռքից ժամանած հայերի համար գործարարությամբ զբաղվելու յուրահատուկ հնարավորություն
- ՀՀ կառավարությունից հզոր աջակցություն ստանալու հնարավորություն
- Հայաստան տեղափոխվելու, վերաբնակվելու և հիմնվելու հարցում աջակցություն
- Հայաստանում աշխատանքային տեղերի ստեղծման հնարավորություն
- Երկրում սթարթափ-էկոհամակարգերի զարգացմանն աջակցություն

Այսպիսով՝
եթե դուք ունեք սթարթափ և սփյուռքի ներկայացուցիչ եք, ապա բաց մի՛ թողեք այս հնարավորությունը և ներկայացրե՛ք «ներՈՒԺ» ծրագրին մասնակցելու հայտը մինչև **2018 թվականի սեպտեմբերի 13-ը:**

Հայտերի ներկայացման վերաբերյալ մանրամասներին ծանոթանալու համար առաջարկում ենք դիմել տեսանյութն ու այցելել ծրագրի պաշտոնական կայքէջը՝ **www.neruzh.am** հղումով:

**Հարգանքով՝**

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն